



ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
 Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0183/02/13
 Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան
 Դատավորներ՝ Հ.Խաչատրյան
 Ն.Գրիգորյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0183/02/13

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

10-ին հուլիսի 2014թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
 դատավորներ՝

Գ.Գրիգորյանի
 Վ.Հովսեփյանի
 Ա.Հայրապետյանի

դոնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության /այսուհետ՝ նաև Հայցվոր կամ Բյուրո/ ընդդեմ Արսեն Կարենի Հարությունյանի ու Արթուր Փաշայի Խաչատրյանի /այսուհետ՝ նաև Պատասխանողներ/՝ համապարտության կարգով 1.233.000 (մեկ միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2014թ. մայիսի 8-ի որոշման դեմ Բյուրոյի գործադիր տնօրեն Միսակ Բաբաջանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվորը 2013 թվականի փետրվարի 14-ին Պատասխանողների դեմ հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան / այսուհետ՝ Դատարան/՝ համապարտության կարգով 1.233.000 (մեկ միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ բռնագանձելու պահանջով, որից՝ 1.208.000 /մեկ միլիոն երկու հարյուր ութ հազար/ ՀՀ դրամ՝ որպես ավտոմեքենային պատճառված և Բյուրոյի կողմից հատուցված վնասի գումար, 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ՝ որպես ավտոմեքենային պատճառված վնասի չափը պարզելու համար նշանակված փորձաքննության համար Բյուրոյի կողմից վճարված գումար և 24.600 /քսանչորս հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես Բյուրոյի կողմից վճարված պետական տուրքի գումար:

Դատարանի 2013 թվականի մայիսի 29-ի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ Բյուրոյի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Դատարանի 2013 թվականի մայիսի 29-ի վճիռը մասնակիորեն բեկանվել ու փոփոխվել է, և Բյուրոյի հայցը բավարարվել է:

Գերագույն դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ պատասխանող Արթուր Խաչատրյանի ներկայացուցիչ Արևիկ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Վերաքննիչ դատարանի 2013 թվականի օգոստոսի 5-ի որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել Դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Դատարանի 2014 թվականի փետրվարի 11-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 395.000 /երեք հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամի չափով: Միաժամանակ Պատասխանողներից հոգուտ Բյուրոյի համապարտության կարգով բռնագանձվել է 3.434 /երեք հազար չորս հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ՝ որպես դատական ծախս:

Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 8-ի որոշմամբ Բյուրոյի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 2014 թվականի փետրվարի 11-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Հայցվորը՝ Բյուրոյի գործադիր տնօրեն Մ.Բաբաջանյանը: Գերագույն դատարանի 2014 թվականի հունիսի 27-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ չի կիրառել <<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> ԼՂՀ օրենքի /այսուհետ՝ ԱՊՊԱ օրենք/ 49-րդ հոդվածի պահանջները, անտեսել է նշված օրենքի 21-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ և 49-րդ հոդվածների, 121-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, չի կատարել սույն գործով Գերագույն դատարանի 01.10.2013թ. որոշման պահանջները, սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածը, խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

1. Ստորադաս դատարանները չեն կատարել ԱՊՊԱ օրենքի և Գերագույն դատարանի 01.10.2013թ. որոշման պահանջները, որի արդյունքում, ի խախտումն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 121-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, <<անհավանական ու անտրամաբանական համարել, որ մեքենային պատճառված վնասի չափը երեք ու կես անգամ գերազանցում է մեքենայի արժեքը (1.208.000/350.000=3,4514)>> և դատական որոշման մեջ արձանագրել, որ վիճելի է մնացել հայցադիմումում նշված չափով վնասի առկայության հանգամանքը, որի բացասական հետևանքները կրում է Հայցվորը: Այդ այն դեպքում, երբ ստորադաս դատարանները ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիայի 2012թ. հոկտեմբերի 29-ի Հմ. 14516.12 եզրակացությունը չեն համադրել Բյուրոյի եզրակացության և հաշվետվության հետ, փորձագետներից պարզաբանումներ չեն պահանջել և այլն:

2. Գործում առկա՝ «ՈՒԱԶ» մակնիշի 53 LL 398 համարանիշի ավտոմեքենային պատճառված վնասի չափը որոշող թվով երկու փաստաթղթերի առկայության պայմաններում ստորադաս դատարաններն անհիմն պատճառաբանություններով հիմք են ընդունել դրանցից մեկը՝ չանդրադառնալով դրանց միջև առկա էական հակասություններին և չհիմնավորելով, թե դատարաններն ինչ իրավական նորմերից էլնելով հիմք չեն ընդունել ԱՊՊԱ համակարգի շրջանակներում օրենքի հիման վրա իրականացված փորձաքննության արդյունքները, որի հետևանքով կայացվել են սխալ դատական որոշումներ, որոնք հակասում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ԱՊՊԱ Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի և 49-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

3. Ի խախտումն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների պահանջների՝ Բյուրոյի կողմից փորձաքննության համար վճարված գումարը համարել են դատական ծախսեր:

Ըստ բողոքաբերի՝ բողոքարկվող գործով առկա են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ բողոքը վարույթ ընդունելու առաջին երեք հիմքերը միասին: Բացի այդ, ստորադաս դատարանների կողմից դատական ծախսերի վերաբերող հոդվածի սխալ կիրառումը հետագայում բացառելու համար նույնպես կարևոր է Գերագույն դատարանի դիրքորոշումը, որի որոշմանը հակասում է հենց սույն գործով բողոքարկվող դատական ակտը: Բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2014թ. մայիսի 8-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Համաձայն «ՈՒԱԶ» մակնիշի 53 LL 398 համարանիշի, 2000թ. արտադրության ավտոմեքենայի գրանցման SQ004117 վկայագրի և գործի նյութերի՝ ավտոմեքենան պատկանել է ԼՂՀ Շահումյանի շրջանի Դադիվանք գյուղի բնակչուհի Կարինե Ալավերդյանին և նրա կողմից տրված լիազորագրի հիման վրա Ռուսաստանի Դաշնության Նիժեգորոդսկի մարզի բնակիչ Սամվել Քոչարյանն ավտոմեքենան 2008 թվականին 350.000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ գումարով վաճառել է իր կնոջը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի բնակչուհի Շողիկ Քոչարյանին:
2. 2012թ. հոկտեմբերի 14-ին, ժամը 19:30-ի սահմաններում, սեփականության իրավունքով Արսեն Հարությունյանին պատկանող և Արթուր Խաչատրյանի կողմից վարած «Միցուբիշի Պաջերո» մակնիշի 25 ՍՕ 600 համարանիշի ավտոմեքենան, Ստեփանակերտ-Դրմբոն ավտոճանապարհի 4-րդ կմ հատվածում բախվել է սեփականության իրավունքով Շողիկ Քոչարյանին պատկանող և Սամվել Քոչարյանի վարած «ՈՒԱԶ» մակնիշի 53 LL 398 համարանիշի ավտոմեքենային /այսուհետ՝ Պատահար/:
3. Համաձայն նախաքննության մարմնի կողմից 2012 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունված՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման՝ Պատահարը տեղի է ունեցել Համապատասխանող Արթուր Խաչատրյանի կողմից «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի և ՃԵԿ-ի 2-րդ կետի պահանջների խախտման հետևանքով: Նախաքննության մարմնի նշված

- որոշումը Համապատասխանողներ Արսեն Հարությունյանը և Արթուր Խաչատրյանը չեն բողոքարկել և իրենց մեղքը դատարանում չեն վիճարկել:
4. Պատահարի պահին <<Միցուբիշի Պաջերո>> մակնիշի ավտոմեքենայի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիրը կնքված չի եղել:
 5. Համաձայն ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիայի կողմից 2012թ. հոկտեմբերի 29-ին իրականացված դատաապրանքագիտական փորձաքննության Հմ. 14516.12 եզրակացության՝ <<ՈՒԱԶ>> մակնիշի 53 LL 398 համարանիշի ավտոմեքենայի վնասի չափը, 2012թ. հոկտեմբեր ամսվա դրությամբ, կազմում է 395.000 ՀՀ դրամ:
 6. Համաձայն Բյուրոյի պատվերով <<Ար Վի Էմ Քոնսալտ>> ՍՊԸ կողմից կատարված թիվ Հ066 հաշվետվության՝ <<ՈՒԱԶ 31514>> մակնիշի ավտոմեքենային վթարի հետևանքով պատճառված վնասը, 2012թ. նոյեմբերի 22-ի դրությամբ, գործող շուկայական գներով, ընդհանուր ծախսը կարող է կազմել 1.208.000 /մեկ միլիոն երկու հարյուր ութ հազար/ ՀՀ դրամ, որն էլ տվյալ դեպքում դիտվում է որպես ավտոմեքենայի սեփականատիրոջը պատճառված նյութական վնասի չափ:
 7. Նշված գումարը Բյուրոյի կողմից տրամադրվել է <<ՈՒԱԶ 31514>> մակնիշի ավտոմեքենայի սեփականատիրոջը՝ երաշխավորված ֆոնդի միջոցների հաշվին:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով:

Համաձայն ԼՂՀ Սահմանադրության 113-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Գերագույն դատարանն ապահովում է Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառումը:

Այդ առաքելությունն իրականացնելիս Գերագույն դատարանը պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը, արձանագրում է ԼՂՀ Դատական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասը:

Համաձայն ԼՂՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Գերագույն դատարանի դատական ակտի հիմնավորումները /այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները/ պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> ԼՂՀ Օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ԼՂՀ-ում ընդունվող իրավական ակտերից մեկն էլ Գերագույն դատարանի որոշումներն են:

Նույն օրենքի 23-րդ և 82-րդ հոդվածների 1-ին մասերն ընդգծում են առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության և պարտադիրության սկզբունքների դրսևորման հանգամանքները:

Վերոշարադրյալ նորմերի համադրված վերլուծության արդյունքում Գերագույն դատարանը գտնում է, որ գործը նոր քննության ուղարկելու դեպքում Գերագույն դատարանի դիրքորոշումները պարտադիր են ստորադաս դատարանների համար և որոշման մեջ նշված ցուցումները նոր քննության ժամանակ ենթակա են ճշտորեն կատարման:

Գործի նյութերից նկատելի է, որ Գերագույն դատարանը 2013թ. հոկտեմբերի 1-ի որոշմամբ ամբողջությամբ բեկանելով Վերաքննիչ դատարանի 2013թ. օգոստոսի 5-ի դատական ակտը և գործն ուղարկելով Դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության, իր որոշման մեջ մասնավորապես նշել է, որ «Վերաքննիչ դատարանը չի հետազոտել և չի գնահատել նույն քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ հաստատված, գործի համար նշանակություն ունեցող այլ փաստական հանգամանքները, ինչպես նաև չի համադրել... 29.10.2012թ. Հմ. 14516.12 ապրանքագիտական փորձաքննության եզրակացությունը «ԱՐ ՎԻ ԷՍ Քոնսալտ» ՍՊԸ-ի ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ Հ066 հաշվետվության հետ, ինչի արդյունքում չի վերացվել գործում առկա հակասությունը՝ վնասի չափի վերաբերյալ»:

Այնինչ նոր դատաքննության ընթացքում Դատարանն անտեսել և չի կատարել Գերագույն դատարանի որոշման պահանջները, չի վերացրել վնասի չափի վերաբերյալ հակասությունը և նոր դատական ակտ կայացնելիս՝ այդ հարցում վճռի հիմքում դրել է այլ ապացույցներով չստուգված և իրենց հաստատումը չգտած տվյալներ, որի հետ Գերագույն դատարանը չի համաձայնվում:

Դեռ ավելին, նոր դատաքննության ընթացքում Հայցվորը 2013թ. հոկտեմբերի 29-ի Բ/SU-1201 թվակիր գրությամբ միջնորդել է Դատարանին՝ ԼՂՀ Գերագույն դատարանի արտահայտած դիրքորոշման ներքո վճռի իրավական հիմնավորվածությունն ապահովելու համար, «վճռում անդրադառնալ նաև «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ի 25.04.2013թ. RVM-043 գրության մեջ նշված անճշտությունների պարզաբանմանը, համապատասխան գրություն ստանալ նաև ԼՂՀ «Դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ից և/կամ փորձագետներին հրավիրել բանավոր բացատրություններ տալու, հաստատված համարել կամ հերքել վկայակոչված փաստերը»:

Այդքանով հանդերձ, Դատարանը Հայցվորի միջնորդությունը չի քննարկել, որով իսկ խախտվել են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի պահանջները:

Այսպիսով, Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի առաջին խմբի փաստարկները համարում է լրիվությամբ հիմնավորված և գտնում է, որ դատաքննության ընթացքում չի կատարվել ԼՂՀ բարձրագույն դատական ատյանի՝ 2013թ. հոկտեմբերի 1-ի որոշման պահանջները:

Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի երկրորդ խմբի փաստարկները նույնպես գտնում է հիմնավորված և պատճառաբանված չի համարում ստորադաս դատարանների եզրահանգումները, որ Պատահարի հետևանքով վիճելի է մնացել հայցադիմումում նշված չափով վնասի առկայության հանգամանքը, որի ապացուցման պարտականությունը կրել է Հայցվորը:

Գերագույն դատարանը նշում է, որ վնասի չափի հարցում Հայցվորը ղեկավարվել է ԱՊՊԱ օրենքի 21-րդ, 49-րդ հոդվածների և «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնող փորձագետների որակավորման, նրանց հետ կնքվող պայմանագրերի գրանցման և ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննության RLI-014 կանոնների 8-րդ և 12-րդ կետերի պահանջներով, սակայն, ի խախտումն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 49-րդ հոդվածի 2-րդ մասի, ստորադաս դատարանները չեն գնահատել և չեն հիմնավորել, թե ինչ իրավական

նորմերի հիման վրա են մերժել Բյուրոյի կողմից որակավորված փորձագետի՝ <<ՈԻԱԶ>> մակնիշի ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման արդյունքները և հիմք ընդունել ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիայի փորձագետի եզրակացությունը: Դատաքննության ընթացքում <<ՈԻԱԶ>> մակնիշի ավտոմեքենային պատճառված վնասի իրական չափի մեծությունը պարզելու համար չի քննարկվել և լուծվել նոր դատաապրանքագիտական փորձաքննություն /կրկնակի/ նշանակելու հարցը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Դատարանի կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի ստուգվել, հետազոտվել և գնահատվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական տվյալներն ու հանգամանքները, և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ, 50-րդ, 121-րդ հոդվածների պահանջների խախտման արդյունքում կայացվել է չհիմնավորված և չպատճառաբանված դատական որոշում:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանը, ստորադաս դատարանի վճիռը բեկանելու և գործը նոր դատաքննության ուղարկելու փոխարեն, իր հերթին նույնպես կայացրել է չհիմնավորված որոշում. պատճառաբանելով, որ Դատարանն ըստ էության ճիշտ է լուծել գործը և ճիշտ դատական ակտ կայացրել:

Գերագույն դատարանն ընդգծում է, որ միայն նոր դատաքննության ընթացքում վերոնշյալ թերությունները և խախտումները վերացնելու դեպքում հնարավոր կլինի գործով ընդունել այս կամ այն օրինական և հիմնավորված որոշումը:

Ինչ վերաբերում է բողոքում նշված՝ Բյուրոյի կողմից փորձաքննության համար վճարված 25.000 ՀՀ դրամ գումարը դատական ծախսեր չհամարելու փաստարկներին, ապա գործը նոր դատաքննության ուղարկելու պարագայում Գերագույն դատարանը այդ հարցին չի անդրադառնում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը և արձանագրված դատավարական իրավունքի նորմերի խախտումները Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ Օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը Դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

à ò à Թ ° ò

1. Հայցվոր «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության գործադիր տնօրեն Միսակ Բաբաջանյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014թ. մայիսի 8-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ